ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - _____
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Եղվարդ քաղաքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Եղվարդ քաղաքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
07-004-0582, 0583, 0584, 0589, 0546 և 0504 կադաստրային ծածկագրերով 41.455615 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող, արոտավայր և այլ հողատեսքեր	07-004-0582, 0583, 0584, 0589, 0546 և 0504 կադաստրային ծածկագրերով 41.455615 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով.

- Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից պահանջը՝ «հետագա փուլերի դեպքում պետք է հաշվի առնել, որ «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում կառուցապատում իրականացվում է այդ ճանապարհները տնօրինողների և շահագրգիռ այլ մարմինների հետ համաձայնեցնելուց հետո, իսկ ՀՀ կառավարության 29.12.2005 թ. N2404-Ն որոշման 8-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ կառուցապատվող օբյեկտի նախագծային փաստաթղթերն անհրաժեշտ է նախապես ներկայացնել Տարածքային

կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համաձայնեցմանը: Ուստի հիշյալ հողամասերի կառուցապատման վերաբերյալ նախարարությունը իր վերջնական դիրքորոշումը կարող է հայտնել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացված կառուցապատվող օբյեկտի նախագծային փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո:

Միաժամանակ, առաջարկում ենք, որ կառուցապատման նախագծային փաստաթղթեր կազմելիս առաջնորդվել ՀՀՇՆ IV-11.05.02-99 «Ավտոմոբիլային ճանապարհներ» շինարարական նորմերի պահանջներով:»:

- Կադաստրի կոմիտեի կողմից նշված պահանջը՝ «փաստաթղթերի փաթեթում ներկայացված լիազորագրերում ներառված չեն բոլոր սեփականատերերի՝ նպատակային նշանակության փոփոխման վերաբերյալ համաձայնությունները, և հետագայում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու դեպքում անհրաժեշտ կլինի ներկայացնել անշարժ գույքի սեփականատիրոջ կամ նրա կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված անձի դիմումը:»:
- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից նշված պահանջը՝ համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
- Շրջակա միջավայրի նախարարության կողմից նշված պահանջը՝ նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 8)-րդ կետի «ա» ենթակետի (հանգստի գոտիներ), ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

4. Եղվարդ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Եղվարդ քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Հ. Դավթյան

Երևան, «5» «մարտի» 2021թ.